քանչիւր տանից ուղարկուած խօնչան ստանում և հաւաքում են մի տեղ։ Ս. պատարագից յետոյ, եկեղեցու բակում, կանաչ ու դալար խոտերի վրայ փռում են երկար ու նեղ սփռոցներ։ Սփոցների երկարութեամբ, իրար դէմ ու դէմը ծալապատիկ նստում են՝ տղամարդկանց խումբն առանձին, իսկ կանանցն առանձին։ Քահանան օրհնում է սեղանը և բազմում է իրեն յատկացուած՝ ամենաբարձր ու պատուաւոր տեղը, իսկ ժողովուրդը նստում է՝ ով որտեղ պատահում է։ Ճաշկերոյթի կառավարիչները առանց ընտրելու, անխտիր բերում են իրենց ձեռքն ընկած սկուտեղները և դնում են ամեն մի ընտանիքի աւագագոյն անդամի առաջ՝ մի-մի հատ։ Բանալով սկուտեղները, սկսում են ճաշել ուրախ-ուրախ և իրենց սիրելիների կենաց գինու բաժակներ պարպել։ Այս հասարակական համայնական ճաշկերոյթի ժամանակ՝ էլ «իմը», «քոնը» հարցնել չկայ, ում առաջը իւր բախտից ինչպիսի կերակուր ու գինի պատահի, սուս ու փուս նա պիտի ուտէ ու խմէ, գոհ սրրտանց և ուրախ դէմքով։ Շատ անգամ աղքատի նիհար գառն ու չոր հացերը և քացախած գինին դնում են հարուստների և պատուաւոր մարդկանց առաջ, իսկ հարուստների ճոխ, լիքն ու բարի սկուտեղը բացւում է օրական հացի կարօտ ու ամենաթշուառ աղքատի առաջ։ Այսօրուայ պէս ես լաւ յիշում եմ հետևեալ դէպքը, որ իմ կեանքումս չեմ մոռացել և երբէք էլ չեմ մոռանայ։

Երբոր ես 7—8 տարեկան էի, ինձ համար մի սև և անմոռանալի Զատիկ բացուեց։ Այդ օրը